Ս. ԷՋՄԻԱԾՆԻ Հայրապետ և Կաթողիկոս ամենայն Հայոց Տ. Տ. ՄԿՐՏԻՉ Ա. Ծնեալ 1820 սպր. 4-ին, ընտրեալ մայիսի 5-ին 1892 Թ. և օծեալ սեպտեմբերի 26-ին 1893 Թ.։

ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ—Տ. Տ. Սահակ կաթողիկոս։

ԱՂԹԱՄԱՐԱՅ—(Թափուր)։

—

### 2) ՊԱՏՐԻԱՐՔՆԵՐ

ԵՐՈՒՍԱՂԷՄԱՅ — Յարութիւն արք եպիսկոպոս Վեհապետեան։

Կ. ՊՈԼՍՈՅ—Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանեան։

### 3) Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՍԻՆՀՈԴ

Նախագահ Սրիստակէս արքեպիսկոպոս Դուրեան։

« Յովհաննէս եպ. Շիրակունի։
» Աշոտ վրդ. Շախեան։
» Մատթէոս վրդ. Մատթէոսեան
» Բարգէն վրդ. Աղաւելեանց։
« Յուսիկ վրդ. Զոհրաբեան։

Պրոկուրոր Ն. Ա. Ֆրէնկէլ։

—

### 4) ԹԵՄԵՐ ԵՒ ԹԵՄԱԿԱԼՆԵՐ

ա) ԵՐԵՒԱՆԻ.—Փոխանորդ Թեմական առաջնորդի. Կարապետ վարդապետ։

Տաթեւի յաջորդ՝ Ներսէս վարդապ.

Հին-Նախիջեւանի յաջորդ.—Իսահակ վրդ. Տէր-Միքայէլեան։

Ղարսի յաջորդ.—Կիւրեղ վրդ.

Ալէքսանդրապոլի յաջորդ — Սահակ վրդ. Բաղդասարեան։

բ) ՎՐԱՍՏԱՆԻ և ԻՄԵՐԷԹԻ.—Թեմ. առաջնորդ Գարեգին եպիսկոպոս Սաթունեան։

Գանձակի յաջորդ.—(Թափուր)։

Ախալցխայի յաջորդ.—Սիոն վրդ. Տ. Մանուէլեան։

Գորու յաջորդ.—(Թափուր)։

գ) ՂԱՐԱԲԱՂԻ.—Առաջնորդ Թեմի Գրիգոր եպ. Գառնակերեանց։

Նուխու յաջորդ.—(Թափուր)։

դ) ՀԱՇՏԱՐԽԱՆԻ.—Թեմական առաջ. Սրիստակէս արքեպիսկ. Սեդրակեան։

ե) ՇԱՄԱԽՈՒ.—Առաջնորդ Թեմի Անանիա եպ. Համազասպեան։

զ) ԲԵՍԱՐԱԲԻՈՅ.– Առաջնորդ Թեմի Ներսէս արքեպիսկ. Խուդավերդեանց։

է) ԱՍՏՐԱՊԱՏԱԿԱՆԻ. —(Թափուր)։

ը) ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ և ՀՆԴԿԱՍՏԱՆԻ. Սահակ եպիսկոպոս Այվազեան։

թ) ԵՒՐՈՊԱՅԻ.—Առաջնորդ Գէորգ եպիսկ. Իւթիւճեան.—Նստում է Մարսէյլ քաղաքում, որտեղ և հայոց մատուռ կայ - Ս. Յարութիւն։ Բացի դրանից առանձին հոլիներ կան՝ Փարիզում, Մանչեստրում և Սուչօվայում։

ժ). ԱՄԵՐԻԿԱՅԻ.—Առաջնորդ Յովսէփ եպ. Սարաճեան։ –Նստում է Ուսթըր քաղաքում, որտեղ կայ հայոց եկեղեցի՝ Ս. Փրկիչ։ Բացի առաջնորդից առան-

ձին հովիւներ կան՝ Նիւ-Եօրքում, Բոստոնում, Պրովիտէնսում, Լօրէնսում՝ Չիկագոյում և Ֆրեզնօյում։

—

ԹԻՒՐՔԻՈՅ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԻՒՆԸ.

ՊԱՏՐԻԱՐՔ ԵՒ ՆԱԽԱԳԱՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՄԱՂԱՔԻԱ ԱՐՔԵՊԻՍԿ. ՕՐՄԱՆԵԱՆ։

Պատրիարքական Փոխանորդ Գաբրիէլ եպ. Ճեվահիրճեան։

Կրօնական Ժողով

1. Մաղաքիա Արքեպ. Օրմանեան Նախագահ։
2 Գրիգորիս Արքեպ. Յովհաննիսեան։
3. Վահրամ Եպիսկ. Մանկունի։
4. Գաբրիէլ Եպ. Ճեվահիրճեան։
5. Եղիշէ Եպիսկ. Դուրեան։
6. Կարապետ Աւագ քհ. Սեթեան։
7. Յովհաննէս Աւագ քհ. Շահպազեան։
8. Գաբրիէլ Աւագ քհ. Խանճեան։
9. Կարապետ Աւագ քհ. Սանթուրճեան։

ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ԹԵՄԵՐԸ

1) ԷՏԻՐՆԷ.—Առաջն. տեղ. Արսէն ք. Դերձակեան։

2) ԹԵՔԻՐԴԱՂ.—Առաջնորդ Ներսէս եպ. Այանեան։

3) ԻԶՄԻՏ.—Առաջնորդ Ստեփաննոս եպ. Յովակիմեան։

4) ՊՐՈՒՍԱ.—Առաջ. Յովհաննէս եպ. Արշարունի։

5) ՊԱԼԸՔԷՍԻՐ-ՊԱՆՏՐՄԱ. — Տեղապահ Թաթուլ ծ. վ. Դուրեան։

6) ՊԻԼԷՃԻԿ.—Առաջնորդ Մովսէս եպ. Կէօմիւրճեան։

7) ՔԵՕԹԱՀԵԱ.—Առաջ. տեղ Մկրտիչ վարդ. Ողանունի։

8) ԻԶՄԻՐ.—(Թափուր)։

9) ԷՆԿԻՒՐԻԱ.—Առաջն. Եղիշէ ծ. վ. Գալֆայեան։

10) ՂԱՅՍԵՐԻ.—Առաջնորդ Տրդատ եպ. Պալեան։

11) ՍՎԱԶ.—Առաջնորդ Պետրոս արք. Թահմիզճեան։

12) ԹՈԽԱԹ.—Առաջ. Պետրոս արքեպ. Թահմիզեան։

13) ԱՄԱՍԻԱ-ՄԱՐԶՈՒԱՆ.—Առաջնորդ. Արիստակէս եպ. Վանքեան։

14, 15) ՇԱՊԻՆ-ԳԱՐԱՀԻՍԱՐ ԵՒ ԱԾ-ՊԸՆԵՐ.—Առաջ Սմբատ ծ. վրդ. Սաատէթեան։

16) ՃԱՆԻԿ.—Առաջ. Յակոբ եպ. Աշոտ-Փափազեան։

17) ԹՐԱՊԻԶՈՆ.—Առաջ. Եզնիկ վրդ. Պապայեան։

18. 19. 20) ԷՐԶՐՈՒՄ—ԲԱՍԵՆ—ԴԵՐՋԱՆ.—Առաջ. Զաւէն ծ. վրդ. Տէր-Եղիայեան։

21) ԵՐԶՆԿԱ.—Առաջն. Դանիէլ ծ. վրդ. Յակոբեան։

22) ԲԱՅԲՈՒՐԴ.—Առաջ. տեղապ. Արիստակէս վրդ. Խաչատուրեան։

23) ՔՂԻ.—Առաջ. ընտրեալ.—Գնէլ վրդ. Գալէմքեարեան։

24) ՔԵՄԱԽ.—Առաջ. Դանիէլ ծ. վրդ. Յակոբեան։

25) ԲԱՅԱԶԷՏ-ԱԼԱՇԿԵՐՏ.—Առաջ. տեղ. Էմմանուէլ վրդ. Պալեան։

26) ՎԱՆ.—Առաջ. Սահակ եպ. Բագրեանդեան։

27) ԼԻՄ-ԿՏՈՒՑ.—Վանահայր Լիմայ Սահակ եպ. Բագրեանդեան։

28) ԲԻԹԼԻՍ.—Առաջ. ընտրեալ Եզնիկ ծ. վրդ. Գալփագճեան։

29) ՄՈՒՇ.—Ընդհ. վանահայր և Պատր. փոխանորդ Խոսրով ծ. վր. Պէհրիկեան։

30) ՍՂԵՐԴ.—Առաջ. Փառէն վրդ. Մելգոնեան.

31) ԴԻԱՐԲԵՔԻՐ.—Առաջ. Եղեկիէլ ծ. վրդ. Արշակունի։

32. 33. 34) ԲԱԼՈՒ-ԱՐՂՆԻ ՉՆՔՈՒՇ.—Առաջ. ընտրեալ Աղան ծ. վրդ. Համամեան։

35) ԽԱՐԲԵՐԴ.—Պատ. փոխ. Եզնիկ ծ. վրդ. Գալբագճեան։



36) ԷԿԻՆ.—Առաջ. տեղապահ Գէորգ վրդ. Արսլանեան։

37) ԱՐԱԲԿԻՐ.—Առաջ. Մուշեղ ծ. վրդ. Սերոբեան։

38) ՉԱՐՍԱՆՃԱՔ-ՉՄՇԿԱԾԱԳ.—Առաջն. Կորիւն վրդ. Էլլիտրամեան։

39) ՈՒՐՖԱ.—Առաջ. Անանիա վրդ. Հազարապետեան։

40) ԲԱՂԴԱՏ.—Պատ. փոխ. (Թափուր)։

41) ԵԳԻՊՏՈՍ.—Առաջ. Յովսէփ եպիսկ. Այվազեան։

42) ԲՈՒԼՂԱՐԻԱ.—Այցելու հովիւ։ Կան 10 եկեղեցիներ և մի քանի քահանայ։

43) ՌՈՒՄԱՆԻԱ.— Աւագերէցներ իւրաքանչիւր եկեղեցւոյ։ Եկեղեցիք 16 և քահ. 7։

ՄԱՍՆԱՒՈՐ ԹԵՄԵՐ

ա) ԱՐՄԱՇ՝ փոխ. վանահ. Եղիշէ եպ. Դուրեան։

բ) ԳԱՍՏԱՄՈՆԻ՝ Առաջ. փոխ. (Թափ.)։

գ) ՊԻԼԵԿԷՍ՝ վանահ. Ստեփ. եպ. Սանթալճեան։

դ) ԿԻՆՃ՝ Առաջ. փոխ. Վարդան վրդ. Յակոբեան։

ե) ԱՂԲԱԿ՝ Առաջ. փոխ. Արսէն վրդ. Գէորգեան։

զ) ՍԱԼՕՆԻԿ՝ հոգ. հովիւ Մկրտիչ քհ. Ջլղատեան։

է) ԿՐԵՏԷ՝ հոգ. հովիւ Աւետիս քհ. Ռափայելեան։

—

Ս. Երուսաղէմի, Սսոյ և Աղթամարայ թեմերի մասին տեղեկութիւններն ուշ ստանալու պատճառով չկարողացանք հասցնել։ Ծան. Աշխ.





† Գէորգ Դ. Կաթողիկոս



# II. ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

## Ս. ԼՈՒՍԱՒՈՐՉԻ ՎԱԽՃԱՆԸ

(Աւանդութիւն).

Բարձր Հայքի Դարանաղեաց գաւառում, Երզնկա քաղաքի մօտ բարձրանում է Սեպուհ կամ Գոհանամք սարը։ Հիանալի՜ սար։ Նրա ամեն մի քարի տակից դուրս են գալիս աղբիւրներ, անմահական ջրեր, ձեան պէս սառն, արծաթի պէս պարզ։ Գարունը որ գալիս է և ձիւները հալւում են, այդ սարի վրայ սև տեղ չի մնում. քարերն անգամ ծլում ծաղկում են, կասես՝ եղեմական դրախտ լինի։

Ահա այս հիանալի սարի վրայ ճգնել է Ս. Լուսաւորիչը։ Նա Տրդատ Թագաւորին դարձի բերելուց յետոյ, ոտով, Խաչ-Գաւազանը ձեռքին, ման եկաւ ամբողջ Հայաստան, կործանեց կռատները, ցոյց տուեց հայ ազգին ճշմարիտ Աստծու ուղիղ ճանապարհը, մտաւ շատ գիւղ ու քաղաքներ, Աստծու խօսքը քարոզելով Թշուառներին մխիթարեց, գերիներին ազատեց, աղքատին հաց տուաւ, ծարաւին ջուր, ամեն տեղ եկեղեցիներ շինեց, վանքեր, հիւանդանոցներ հաստատեց և այս բոլորը նա արաւ Քրիստոս Աստծու զօրութիւնով, Խաչ-Պատարագի զօրութիւնով։ Այսպէս երկար ման գալուց մաշուած, զգալով որ իր վախճանը մօտեցել է. քաշուեց Գոհանամք սարի Մանեայ այրը աղօթքով անցկացնելու իր վերջին օրերը։

Մանեայ այրը գտնւում էր մի խոր ձորի մէջ, իսկ այրի գլխին բարձրանում էր մի սրածայր ժայռ. ամեն առաւօտ, լուսաբացին Ս. Լուսաւորիչն իր Խաչ-գաւազանի օգնութեամբ՝ բարձրանում էր այդ ժայռի գլխին ու աղօթում էր։

Ամառուայ կէս գիշերներից մէկն էր, երկնակամարի վրայ հազարաւոր մանր ու մեծ աստղեր փայլփլում էին. աշխար-աշխարհ քուն էր մտել, Ս. Լուսաւորիչը զգալով իր հոգու խորքում, թէ շուտով պիտի մեռնի, դուրս էր եկել իր այրից և բարձրանալով

իւր միշտական աղօթատեղը՝ ժայռի գլուխը, վերջին անգամ աղօթք էր անում։

Եւ չոքած այդ ժայռի կատարին, ձեռներն երկինք համբարձած աղօթք էր անում։ Վերջին անգամ բաց արաւ նա իւր սիրտը Աստծու առաջ, խոստովանուեց իւր արած ու չարած մեղքերը, թողութիւն խնդրեց Աստուածանից և հանդիստ սրտով սպասում էր մահուան։ Այն ինչ մահն ուշանում էր և Ս. Լուսաւորչի սիրտը սկսեց ալեկոծուել։ Ի՞նչն էր արդեօք նրան յուզում, ալեկոծում այդ վերջին րոպէին։

Նա իւր սրտում փափագ ունէր, մեռնող մարդու վերջին սուրբ ցանկութիւն. մահուանից առաջ ցանկանում էր իմանալ, թէ հայոց ազգը, որին ծնել էր հոգեպէս, որի սիրուն անչափ չարչարանքներ էր քաշել, արիւն արցունք թափել, ինչ վիճակ պիտի ունենայ։ Ի՞նչ կլինի հայ ազգի բախտը—հարցնում էր նա ինքն իրեն, և անթիւ ու անհամար մտքեր պտոյտ էին գալիս նրա գլխում։

«Ո՞վ գիտէ. ասում էր նա, իմ մահից յետոյ ինչ օրի կընկնի Հայաստանը. ո՛վ գիտէ, ո՛ր անօրինի սուրը կգայ կբռնանայ հայոց խղճուկ ժողովրդի վրայ, կկործանի նրա վանքերն ու ժամերը, կհալածի հայ-քրիստոնէի հաւատը և դեռ քանի՜ քանի՜ թշուառութիւններ, դժբախտութիւններ պիտի գան հայ ազգի գլխին, իսկ եթէ յանկարծ հայ ազգը մոռանայ, ուրանայ իւր Տէր Աստծուն, որը յատուկ նրա համար մի անգամ էլ իջաւ Հայաստան և Վաղարշապատում պատուիրեց մի տաճար կանգնեցնել իւր անուանը և այս բոլորը մոռանալով՝ ուրանայ իւր ժամն ու պատարագը, աստուածադիր Ս. կարգերն ու օրէնքները... Վա՜յ, հազար վա՜յ այն դժբախտ օրերին, երբ հայ քրիստոնէի անունն ու յիշատակը ազգերի միջից պիտի ջնջուի»։ Այսպէս էր մտածում նա և նրա սիրտը մորմոքւում էր. մէկ կամենում էր մխիթարել ինքն իրան ասելով. «մի՞թէ Աստուած կմոռանայ իմ անչափ չարչարանքները և իւր հայրագութ խնամքը, որով այս ազգը հեթանոսական խաւարից փրկուեց». մէկ էլ նորից տարակուսում և ասում էր. «իսկ եթէ մոռանայ և հայ ազգի անօրէնութիւնների վրայ բարկանայ ու ջնջի հայի անունը ազգերի շարքից. այն ժամանակ ուրիշ ժողովուրդները տեսնելով այս ազգի կործանումը իմ անունն ու յիշատակը պիտի



անարգեն, իմ չարչարանքներն էլ կլինեն զուր ջանք, անօգուտ վաստակ»։

Այսքան անվերջ տարակուսանքների և կասկածների մէջ տանջւում էր Ս. Լուսաւորիչն այդ կէս գիշերին ծունկ չոքած ժայռի կատարին. և նա, որ իւր բոլոր աղօթքների մէջ չէր մոռացել կրկնել «Տէր, նայիր իմ չարչարանքներին, խղճա հայոց ազգին, աչքդ նրա վրայ լինի, թող հայի օջախի ծուխը չկտրուի, օր ու գիշեր քեզ յիշի, և քո փէշից պինդ բռնի, քո օրէնքներդ պահի, պատուհասից ազատ լինե, չար թշնամուց չգերուի և յաւիտեան ապրի»,—այսպէս պաղատագին աղօթողը չէր իմանում թէ իւր աղօթքն ընդունելի եղել է Աստծուն, թէ ոչ, և այժմ նա՝ իւր կեանքի այս վերջին ժամին ուզում էր անպատճառ իմանալ, բայց ինչպէս։

Նա ապաւինեց աղօթքին. աչքերը ձգեց դէպի երկինք, ձեռքերը տարածեց և սկզբում փառք տուաւ Աստուծուն իւր անչափ ողորմութեան համար, որով գթաց հայոց ազգին, արժանի արաւ իւր լոյսին. ի վերջոյ խնդրեց Աստուածանից, որ իւր սրտի վերջին փափագը կատարի, իրեն յայտնի հայ ազգի ապագան։

Այսպէս նա երկար աղօթք արաւ, բայց պատասխան չստացաւ և ոչ մի տեղից։

Նրա չուրջը լուռ էր ամեն ինչ։ Դարձաւ, նայեց դէպի երկինք, կարծես այնտեղ ուզում էր կարդալ հայ ազգի ճակատագիրը, բայց երկնքի երեսին ոչինչ գրած չկար, անթիւ մանր ու մեծ աստղերը փայփլում էին այնտեղ, ասես ծիծաղում էին, բայց պատասխան չէին տալիս։ Հեռուն, արևելեան լեռների յետևից դանդաղօրէն դուրս եկաւ ծերացած լուսնակը մոլոր ու տխուր. նա էլ չգիտէր, կամ չէր կարող պատասխան տալ Ս. Լուսաւորչին։

Անցնում էին ժամեր միմեանց յետևից, մօտենում էր առաւօտը, երբ Ս. Լուսաւորիչը պիտի թողնէր այս ցաւերի ծով աշխարհը՝ բայց իւր վերջին կամքը չէր կատարուել. պատասխան չէր ստացել։ Այս պատճառով նա նորից վառ յուսով, կատարեալ հաւատով ապաւինեց իւր աղօթքին. նա մրմնջում էր շատ սրտաբուղխ աղօթքներ. ասում ու լաց էր լինում, լաց էր լինում ու աղօթում։ Նրա աչքերը կարծես ջուխտակ աղբիւրակներ լինէին, որոնցից հոսում էր արտասուքը, որը այտերի և սպիտակափառ մօրուքի վրա-

յով գլորուելով թափւում էր իւր առաջ գտնուած քարի փոսի մէջ։ Բայց պատասխան չկար ու չկար։

Մինչ կէս գիշերը վաղուց էր անցել. լուսնեակը եկել, կանգնել էր Ս. Լուսաւորչի դէմ ու դէմ և նայում էր նրան նոյնպէս տխուր, նոյնպէս մոլորական։ Կարծես նա էլ էր հասկանում Հայաստանի մեծ Սրբի վիշտը, բայց դարման անել չէր կարող։

Իսկ ս. Լուսաւորչի գլխին արար-աշխարհ մթնել էր. ուզում էր երկինքը իւր գլխի վրայ փուլ գար, կամ երկիրը պատառուէր ու իրեն կուլ տար, որովհետև մտածում էր, թէ՞ ուրեմն ես Աստծու երեսից ընկած մի մարդ եմ, որ իմ այսչափ աղաչանքս ու պաղատանքս չի լսում, այս խեղճ ժողովրդի բախտն ինձ չի յայտնում։ Այսպէս շուարած մնացել էր տեղնուտեղ չոքած. Նրա շուրջը մեռելային լռութիւն էր տիրում, ոչ ոք չկար որ մխիթարական մի խօսք ասէր. իսկ նա աչքը մէկ երկինք էր ձգում, մէկ երկիր, սար ու ձոր ծանրացել էր նրա սրտի վրայ։

Երրորդ անգամը լինելով՝ նա նորից աղօթքին նուիրուեց. հեռացրեց իրենից իսպառ յուսահատութիւնը և ջերմաջերմ աղօթք արաւ. բայց այս անգամ, հակառակ իւր կամքին, չէր կարողանում շարունակել. Նրա աչքերը փակւում էին, քունը տանում էր և նա խոր քուն մտաւ։ Քնի մէջ նա տեսաւ մի մարդ, որ մօտեցաւ և այս աւետիսը տուեց. «Ս. Լուսաւորիչ, հայ ազգի և Հայաստանի ս. Հայրապետ, Աստուած լսեց քո խնդիրքը և իմ բերանով յայտնում է քեզ իւր կամքը. հայ ազգը երբէք չպիտի ջնջուի աշխարհիս երեսից. Նա, իրաւ է, շատ չարչարանքներ պիտի տեսնի, շատ նեղութիւն պիտի քաշի, շատ արիւն արցունք պիտի թափի, բայց չպիտի ջնջուի։ Ազգերն պիտի գան ու գնան, մինչ հայը իւր Աստծով ու քո անունովը, իւր Իջման տեղովը, իւր խաչով, ժամովն ու պատարագովն անսասան պիտի մնայ, իբրև առաջին քրիստոնեայ ազգ։ Շատեր պիտի գան. երկպառակութիւն պիտի հանեն, եղբայր եղբօրից բաժանեն, բայց վերջ ի վերջոյ այդ չարերը պիտի խափանուեն, աշխարհիս չորս կողմ ցրուած բոլոր հայերը քո անունով պիտի միանան, իրենց հաւատն ու սուրբ կարգերը պիտի պահեն և թէ այդ բոլորը պիտի այդպէս լինի, ահա քեզ նշան. քո թափած արցունքը լցուած է մի կանթեղի մէջ, որ առանց շղթայի կախուած է երկնքից. կանթեղը կվառուի անպատրոյգ, երկնքի ու



երկրի միջև։ Դա է ահա հայի ճրագը, քանի նա վառ կմնայ, այնքան ժամանակ հաստատ կլինի հայ ազգը. այդ կանթեղը տեսանելի կլինի միայն հայերին և հայերից էլ մենակ արժանաւորներին. Նրանք հաւատով պիտի նայեն և պատմեն բոլորին, թէ տեսանք հայի ճրագը, մեծ և օրհնեալ է հայ քրիստոնէի Ս. Լուսաւորչի Աստուածը»։

Այս բոլորը շատ որոշ լսեց Ս. Լուսաւորիչը, ուրախութիւնից քնից վեր թռաւ հոգւով զուարթ, հոգւով ցնծուն։ Նայեց երկնքի երեսին, այնտեղ հեռւում վառւում էր մի կանթեղ, որ կարծես ճիշտ Հայաստանի մէջ տեղը կախուած լինէր, և նա մի լոյս էր արձակում, այնպէս մեղմ, այնպէս սիրուն։ Միւս կողմից աղօթարանն սկսել էր բացուել, սարի թռչուններն արթնացել և ուրախ ճռուողիւնով բարիլոյսի Աստծուն էին փառաբանում. մի խօսքով ողջ աշխարհ Ս. Լուսաւորչի հետ ուրախացել էր. իսկ նա ինքն իւր սրտի փափագին հասած, հոգեզմայլ սրտով գոհացաւ Աստուածանից նրա անճառ բարութեան համար։

Այդ միջոցին արևելեան սարերի յետևից դուրս եկաւ արևը և նրա շողերից մի փունջ ընկաւ Ս. Լուսաւորչի դէմքի և սպիտակափառ միրուքի վրայ։ Այս տեսնելով Հայաստանի Սուրբը՝ չոքած տեղից վեր կացաւ, իւր ժպտուն և յուսալից աչքերով նայեց վերջին անգամ ողջ Հայաստանի չորս բոլորը, մի պահպանիչ ասաց և խաչակնքելով տեառնագրեց։ Յետոյ դարձաւ դէպի հայի ճրագը, նրա սիրուն, մեղմիկ լոյսը գրաւեց նրան և այլևս չկարողացաւ իւր աչքը հեռացնել կամ շարժել և նա զգալով որ վախճանը մօտ է յենուեց իւր գաւազանի վրայ և մրմնջաց «Աստուած իմ, այժմ պատրաստ եմ, ահա Հայաստանը, ահա նրա պատարագի սեղանը՝ այս սուրբ սարը և ահա ես հայ ազգի կենդանի և անմռունչ ողջակէզս, ընդունիր»։ Այս ասաց և իւր արդար հոգին աւանդեց։ Նրա մարմինը կանգնած մնաց ոտների վրայ, յենուած իւր գաւազանին. Նրա աչքերն այնպէս բաց յառած մնացին հայի ճրագին։

Այսպէս վախճանուեց Դարանաղեաց գաւառի Գոհանամբ սարի գագաթին կանգնած Ս. Լուսաւորիչը, հայ ազգի պահապան հրեշտակը։ Նրա սուրբ մարմինը գտան հովիւները, բայց չճանաչելով վերցրին մի անյայտ տեղ թաղեցին, մինչև որ Աստծու հրամանով գտնուեցան Ս. Նշխարները։ Քրիստոնեայ ազգերն այս իմանալով

մարդիկ ուղարկեցին Նրա մասունքներից տարան շատ հեռուներ, բայց Նրա Սուրբ Աջը, որով խաչակնքում, տեառնագրում էր Հայաստանը, մնաց մեզ՝ հայերիս մօտ, իբր սրբազան աւանդ մեր Ս. Հայրապետից. իսկ այն Աստուածավառ ճրագը կախուած է ահա քառագագաթ Արագածի կատարին. այնտեղ վառւում է Ս. Լուսաւորչի արցունքը աղօտ լոյս արձակելով և ո՞վ գիտէ, դեռ ևս քանի՜ քանի՜ դարեր չարունակ պիտի վառուի այնտեղ հայ ազգի հոգևոր կենդանութեան երաշխիքը՝ այդ սուրբ կանթեղը։

Մ. Խ.





## III, ԱՍՏՂԱԳԻՏԱԿԱՆ

### ԱՐԵՒԻ ԵՒ ԼՈՒՍՆԻ ԽԱՒԱՐՈՒՄՆԵՐԸ.

1905 թ. երկու անգամ արևի և երկու անգամ լուսնի խաւարումներ տեղի կունենան, որոնցից.

1) Արևի (մանեկաւոր) խաւարումն 21-ին փետրվարի, սկիզբը 5 ժ. 19 ր. վերջը 11 ժ. 4 ր. առաւ.։

2) Արևի (լիակատար) խաւարումն 17-ին օգոստոսի, սկիզբը 1 ժ. 27 ր. վերջը 6 ր. 37 ր. առաւ.

3) Լուսնի (մասնաւոր) խաւարումն 6-ին փետր. սկիզբը 8 ժ. 52 ր. վերջը 11 ժ. 5 ր. երեկ.։

4) Լուսնի (մասնաւոր) խաւարումն 2 օգոստոսի 5 ժ. 39 ր. վերջը 7 ժ. 42 ր. առաւօտեան։

Այս խաւարումներից տեսանելի կը լինի Կովկասում միայն՝ փետր. 8, և օգոստ. 2-ի խաւարումները՝ այն էլ մասնաւոր։

# IV. ՕԴԵՐԵՒՈՅԹԱԲԱՆԱԿԱՆ

Էֆիմէրտէի գուշակութիւնը։

Առաջիկայ (1905 թ.) տարին միջակ կը լինի և համարեայ ամբողջ տարի հարաւային հողմը կը փչի։

Ձմեռը՝ քամոտ կը լինի, գարունն՝ միջակ՝ թեթև անձրևներով։ Ամառն՝ բարեխառն, թեթև քամիներից պտուղները կը փչանան։ Աշնանը վաղաշոտ կանայք կը հիւանդանան։

Ըստ Դէմոկրատէսի կարկտից վնաս կը հասնի և պէտք է աղաչել Աստուած որ մահտարաժամ եւ (ցաւ) չը երևայ։

Այս տարի աւազակները կը բազմանան, և Երևակի տակ ծնուածները իրանց հաւատը կը կորցնեն։

Երկնքի եօթներորդ տանն Լուսնթագէ-Մուշթարւոյ հետ կցուած լինելովն գուշակվում է, որ սաստիկ կռիւ է լինելու կոտորածներով և մահ մեծահամբաւ և հարուստ անձանց։

Լուսաբերի երկնքի եօթներորդ տանն գտնուելովն եւ նշան է, որ ինչպէս կանայք, այնպէս և իգաբարոյ անձինք ամեն բանում յաջողութիւն կունենան։

Իսկ այս տարի տանուտէրն Արեւն լինելով, գարունն՝ անոյշ, դաշտերը լի, պտուղները և գինին առատ. Ամառն անձրևոտ։ Ձմեռն կարճ, թէև սաստիկ ցուրտ։

Շատ քաղաքներ քարուքանդ կը լինին հեծելազօրներից։ Յունաստանի կողմերից դուրս եկած զօրքը եւ, շատ գաւառներ ոտի տակ կը տայ։ Բաբելոնի կողմերը ազգերի մէջ շարժում և Ասորեստան տրտմութիւն։



# V. ԻՄԱՍՏՆԵՐ

Իմաստութեան սկիզբը լռութիւնն է։

—Մեր կորստեան անդունդը մեր սրտումն է։

—Անվերջ վշտերի փարատողը մահն է։

—Ժամանակիս տիրողը փողն է։

—Մարդս կեանքի մէջ կամ իր խղճի ստրուկն է լինելու (բարի, կամ բռնակալը (չար)։

—Աշխատի՛ր, որ կշտանաս, աղօթի՛ր որ փրկուես, համբերի՛ր եթէ ուզում ես որ օգնեն։

—Սանձիր լեզուդ եթէ ուզում ես աշխարհումս ապրել։

—Մարդիք ոչ այնքան մարմնով են, և՝ որքան հոգով։

—Քնիր առանց ընթրիքի, վերկաց առանց պարտքի։

—Բամբասանքը ոչ այլ ինչ է, այլ թէ նախանձի արդիւնք և զէնք։

—Մենք այնքան անբաղդ չենք լինում, որքան—ինչպէս երևակայում ենք։

—Ինքդ քեզանից աւելի վախեցիր քան թշնամուցդ։

—Համբերութիւնն ու աշխատանքն հրաշքներ են գործում։

—Եթէ գործ ես սկսում, ուրիշի վրայ յոյս մի դնիր։

—Ով տանջուել չգիտէ, նա ապրել չգիտէ։

—Աշխատանքը կեանքի հոգին է։

ԿԱՆԱՆՑ ՄԱՍԻՆ

Ամենասիրելին և ամենաթանկագինը մայրն է։

—Ջահել կինը կտրիչներին էլ կծերացնէ, իսկ հին գինին նոյն իսկ ծերունին էլ կջահելացնէ։

—Կնոջ սիրտը տարուայ եղանակների նման փոփոխական է։

—Կանայք հենց նրանց են պաշտում, որոնց չեն ճանաչում։

—Կանայք և գեղերն են քայքայում մարդուս գլուխը։

—Յաճախակի համբուրողը կարող է նաև կծել։

—Կնոջ սիրտը սիրոյ ծով է, որի մէջ շատերն են խեղդւում։

—Սէրը կրակ է, որից կարող է հրդեհ ծագել։

—Սիրոյ իսկական հիմքը՝ բաղդաւորութիւնն է։

—Մարդ ամուսնանալու առաջին օրն և եա պէտք է իր կեանքն ապահովացնէ, որովհետև կինը հենց ամբողջովին այրուող և բռնկուող նիւթերից է.

—Կանանց մեծ մասը հէնց նրանց են սիրում, որոնք իրանց (կանանց) տանջում են։

Երկու կանանցից այն ընտրեցէք, ով վատ է հագնուած։

—Տղամարդի բնաւորութիւնը հեշտութեամբ կարելի է իմանալ նրա գրի ձևից, իսկ կնոջը՝ համբոյրից։

—Կնոջ տղամարդութիւնը նրա կանացիութեան մէջ է։



# VI. ԿԵՆՑԱՂԱՎԱՐԱԿԱՆ

Ի՞ՆՉ ՊԷՏՔ Է ԸՆԵՆՔ ՄԵՐ ԱՂՋԻԿՆԵՐԸ *)։

Ամերիկական թերթ մը որ իւր բաժանորդներու միջև մրցման կդնէ հետեւեալ նիւթը «Ինչ պէտք է ընենք մեր աղջիկները»։ Բազմաթիւ մրցողներու մէջէն ստորև գրուած պատասխանը կստանայ մրցանակը։

Ի՞նչ պիտի ընենք մեր աղջիկները։

Նախ քաջասիրտ և ուժով քրիստոնեայներ, յետոյ տուէք անոնց լաւ դաստիարակութիւն մը։ Սորվեցուցէք անոնց աղէկ կերակուր պատրաստելը, ճերմակեղէն լուալը, արդուկելը, գուլպաներ կարկտելը, կոճակներ կարելը, շապիկ շինելը և իրենց բոլոր զգեստները ձևելը։

Թող գիտնան տան հաց եփելը և չիշեն թէ՛ լաւ ու մաքուր խոհարարութիւնը բժշկի ու դեղարանի ծախքերը կպակսեցնէ։ Ըսէք իրենց թէ հինգ ֆրանքնոցը հարիւր սու կարժէ և խնայողութիւն ընելու համար պէտք է պակաս ծախսել, թէ՛ եկամուտէն աւելի ծախսողն անպայման պէտք է սպասէ թշուառութեան։

Հասկցուցէք իրենց թէ՛ վճարուած բամպակէ զգեստ մը աւելի կը սազէ, քան պարտքով գնուած մետաքսէ շրջազգեստը։

Թող կանուխէն՝ պզտիկուց գնել և իրենց ծախսելու հաշիւները բռնելը գիտնան։

Կրկնեցէք իրենց միշտ թէ թևերը բաց և գոգնոցաւոր համեստ գործաւոր մը, նոյն իսկ եթէ փարա մ՚ալ չունենայ, հարիւր անգամ աւելի յարգելի է քան տասնեակ երիտասարդ շքեղազգեստ, սնապարծ և պակասամիտները, որոնք գրեթէ միշտ ապականուածներ են իրենց ներքին փտութիւնը կը ծածկեն արտաքին վայելչութիւններու ներքև։

Սորվեցուցէք իրենց պարտէզի մշակութիւնը և ծաղիկները սիրելը։

Ասկէց ետքը, եթէ միջոցնիդ կը ներէ, դաշնակի և գծագրութեան դասեր ալ տուէք. գիտցէք որ այս արուեստները բոլորովին երկրորդական են կեանքի մէջ և զայն երջանկացնելու համար շատ քիչ տեղ կը բռնեն։

Մանաւանդ թող սորվին արհամարհել սնոտի երեւոյթները, իրենց այոն այո, և ոչը ոչ։

Երբ իրենց ամուսնութեան ժամանակը գայ, համոզեցէք զիրենք, որ երջանկութիւնը կախում ունի ամուսնոյն բարոյական նկարագրէն և լաւ յատկութիւններէն՝ թէ չէ անոր հարըստութենէն կամ փայլուն դիրքէն։

Եթէ այս բոլորը դուք կշռեցիք և անոնք ձեր խօսքերը հասկցան, վստահ եղէք որ ձեր աղջիկները երջանիկ պիտի ըլլան և իրենց ճամբան պիտի գտնեն։

*) Այս յօդուածը հաճոյքով քաղում ենք «Գութան» հանդիսից և նոյնութեամբ զետեղում այստեղ մեր ընթերցողների հետաքրքրութեան համար։ Ծան. Աշխ.

# VII. ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ

ՄԱՐԴՈՒ ՀՈՏԸ

Յայտնի է մի քանի կենդանիներ, մանաւանդ շները գտնում են իրանց յայտնի մարդկանց հետքերը, առանց նրանց տեսնելու և կամ ձայնը լսելու։ Սրանով բնախօսները հասել են այն եզրակացութեան, որ ամեն անհատ ունի իւր սեփական հոտը։ Բժիշկ Բերը յայտնում է իւր մէկ բարեկամի մասին, որը ընդունակութիւն է ունեցել ճանաչել իւր ծանօթներին նրանց հոտից մի քանի քայլ հեռաւորութեան վերայ։ Խփած աչքերով նրան միշտ յաջողւում էր անուանել իւր ծանօթներին, հենց որ նրանք ղանգահարում էին կամ ներս մտնում ընդունարանը։ Բժիշկ Բերը հաստատում է որ միևնոյն հոտը ունենում է ամբողջ ընտանիքը միայն զանազան աստիճանի, այնպէս որ մշտական յարաբերութիւն ունեցողը, միևնոյն ժամանակ լաւ հաստատութեամբ կարող է ճանաչել նրանց մի քանի քայլ հեռաւորութեան վրայ։

—

ՏԱՍՆԵՐԵՔ թիւն սկզբից ի վեր աղետալի մի թիւ է նկատուած։ Դա, ի հարկէ, նախապաշարում է, բայց բանն էլ այն է, որ միշտ իրարից տարօրինակ իրողութիւններ ապացուցանում են այդ թ-ի չարաշուք համբաւը։ Այսպէս՝ ամերիկեան մի թերթ ծանուցանում է, որ վերջերս Թօլէֆ Մոռկանս անունով 13 տարեկան մի պատանի տրամուայի տակ ընկնելով ջախջախուել է։ Տրամուայի թիւն էր 13։ Պատանու գրպանում 13 նամակ կար։ Տրամուայի կարողութիւնն էր 58 (5+8=13)։ Արկածը պատահել է 6 ժ. 25 ր. (5+2+5=13)։ Պատանին բնակւում էր Ֆրանկլին փողոցում № 130 տանը։

Ն.-Դ. № 20.



# VIII. ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ

### ԽՈԼԵՐԱՅԻՑ ԱԶԱՏ ՊԱՀԵԼՈՒ ՀՆԱՐՔ։

Ահից և շուտափոյթ գաղթելուց չպիտի մարդ իր սովորական կեանքի եղանակը փոխի։ Ստամոքսը չպիտի ծանրաբեռնել դժուարամարս, չաղ, հում, շատ սառը, շատ ծարաւեցնող և առաւելապէս հին, փչացած, շատ աղած կերակուրներով։ Այդպիսի կերակուրների գործածութիւնը աւելի գիշերներն է վնասակար, քան ցերեկները։

Երկար ժամանակ քաղցած մնալն էլ վնասակար է, ինչպէս և տնից առաւօտները դուրս գալը, այլ պիտի խմել տաք թէյ, սուրճ, թերխաշ ձու, եփած կամ խորոված մի կտոր միս, պիտի որոշեալ ժամերին ճաշել և ճաշը բաղկացած պիտի լինի, ինչպէս ասացինք վերը, հեշտ մարսելու կերակուրներից։ Նրանք, որոնք բանջարեղէնի-կանաչեղէնի և պտուղների սովոր են և առողջ ստամոքս ունին, կարող են գործածել, բայց պիտի լաւ մաքրած, եփած, եռացրած ջրի մէջ անցկացրած, և շատ հասած, վնասած և փթած չպիտի լինի։

Այն ամէն բաները, որոնք փորի լուծումն կարող են առաջացնել անպայման պիտի խոյս տալ և պատահած ժամանակ անմիջապէս բժշկի պիտի դիմել։ Հում և անեփ կաթն էլ վնաս է։ Ամէն կերակուրներ պիտի ճանճերից թաքցնել։ Ամանները էլ միշտ եռացրած ջրով լուանալ և ծարաւն երբէք հում ջրով չպիտի կոտրել, եթէ աղբիւրներ կամ շատ խորը փորած ջրհորներ չկան. այլ թէյ խմել կամ եփ տալ ջուրը, սառեցնել և մէջը կարմիր գինի, լիմոն կամ անանուխ խառնել։ Միանգամից սառը ջուր և սառն խմելիք չպիտի ընդունել։ Թունդ խմիչքները լաւ են, բայց դրանց չափազանց գործածութիւնն անչափ վնասակար է։ Մարմնի մաքրութիւնը անհրաժեշտ է, բայց շատ սառը բաղնիք չպիտի մտնել, ինչպէս և վնաս է վաղ առաւօտ կամ ուշ երեկոյեան, այն էլ անմաքուր տեղերում լողանալ։

### ԱՆՀՐԱԺԵՇՏ ԽՈՐՀՈՒՐԴ ՎԱՐԱԿԻՉ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ։

Որքան կարելի է շուտ հիւանդների մօտից առողջներին հեռացնել։ Արտաթորելու և փսխելու համար ամաններ դնել, որոնց մէջը ածած լինի կարբոլեան թթւուտ կամ սնդկի աղով (сулема) ջուր։ Սպիտակեղէնները և ամեն տեսակ շոր ու փալասեղէններ. որոնք գործածութեան մէջ են և հիւանդը նրանց դիպչում է, առաջուց պէտք է եռացնել ջրում և յետոյ լուանալ, մահճակալը, անկողինը և միւս իրեղէնները, որոնց հիւանդը գործ է ածում, ախտահանութեան կերպի, պէտք է մաքրել և լուանալ։ Վարակուելուց յետոյ էլ տան պատերը նորից պէտք է սուաղել և դեղ քսել, հին պաստառներն էլ պատառոտել, պոկել, այրել և նորերը կպցնել։ Հիւանդի սենեակում վատ հոտը մաքրելու համար, պէտք է զանազան ծխանելիքներ ծխել, այլ և պէտք է սենեակը քամու տալ (լուսամուտները և դռները բաց անելով) և այն ամէն իրերը, որոնք վատ հոտ են առաջացնում, հեռացնել, կերակուրն էլ չպէտք է պահել կամ թողնել հիւանդի կացարանում։ Հիւանդին սպասաւորողները որպէս զի չվարակուեն, հիւանդի բնակարանում չպէտք է ոչ ուտեն, ոչ խմեն, իրանց գլուխը, մօրուքը և վերնազգեստը խոզանակով պէտք է մաքրեն, որը պէտք է թաց արած լինի կարբոլեան թթւուտի ջրի հետ խառնած ջրով։ Վարակիչ ցաւից մեռածների դիակներն էլ պէտք է շտապել հեռացնել բնակարաններից։

# IX. ԲԺՇԿԱԿԱՆ

### ՄԻ ՔԱՆԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԵԱՆՑ ՆՇԱՆՆԵՐԸ.

#### ա) ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ ԲՈՐԲՈՔՈՒՄ

Շարունակ անընդհատ ցաւ. գործարանների գործողութիւնների խանգարուել, սաստիկ տենդ (ներքին բորբոքման ժամանակ ցաւը աւելի սաստիկ է լինում)։ Լեարդի, սրտի թաղանթի մօտ երիկամունքների գլխի և մէջքի ողնաշարի ցաւը շատ մեղմ է լինում։ Սրա համար բորբոքման նշանը միայն ճնշելու ուժից անընդհատութիւնն է։ Ուղեղի բորբոքման ժամանակ զառանցում է (դելին է տալիս)։ Կոկորդի բորբոքման նշանը—խղխղոց, խռխռոց։ Թոքերի բորբոքման—հեռոցը։ Տենդը ջղային, բորբոքիչ և փթեցնող է լինում։ Փորի և աղիքների բորբոքումն է՝ եթէ բացի այս նշաններից և զկռտում է։ Ուղեղի բորբոքման ժամանակ, սիրտը խառնում է, բերանից գցում, դեղին է տալիս և քնարբութեան մէջ է մտնում։ Երիկամունքների և աղիքների բորբոքման ժամանակ նոյնպէս սիրտը խառնում է փսխում է բերանից։

#### բ) ԽՈԼԵՐԱՅԻ ՆՇԱՆՆԵՐԸ

Ամենից առաջ շուտ-շուտ և առատութեամբ լուծում է մոխրագոյն, իսկ վերջը բոլորովին անգոյն բրնձի ապուրի նման հեղանիւթ (շատ անգամ մի ժամուայ մէջ 10—15 անգամ), փորի մէջ առանց ցաւի համարեայ ղալարում և գրգռոց զգում։ Ջրութեթը պակասում է, ամեն 2—3 ժամը մի անգամ, իսկ 2—3 անգամ լուծելուց յետոյ էլ փսխում է կերակրի մնացորդները, յետոյ կտրած կաթի նման հեղանիւթ. այսպէս շարունակւում է ամեն 10—15 րոպէից յետոյ, սկզբումը լինում է հեշտ և գնալով աւելի դժուարութեամբ և չարչարանքով։ Վրան տխրութիւն և սրտի դգալի տակ ցաւ է գալիս։ Փորի լուծելուց և փսխելուց յայտնւում են կծկումները, որ խոլերայի ամենավտանգաւոր նշաններիցն է, որը առաւելապէս ոտի կճղակներում՝ շատ անգամ էլ ձեռքերում և ոտներում։ Մարմինը սառչում և կապտում է։ Հիւանդութեան սկզբումը տաքութիւն չէ լինում, այլ ընդհակառակը այս նշաններից յետոյ էլ տաքութեան աստիճանը ցածրանում էլ է, ծարաւութիւն է զգում, զգացողութիւնն էլ մինչև մահը պահպանւում է։ Այս նշանները մինչև 8—24 ժամ տևում են. բայց պատահում է որ 2—3 օրից էլ առաջ մեռնում են, երբ զարկերակը սկսում է զօրեղանալ և գնալով արագանում է (մինչև 90—100 զարկ), արեան՝ գլուխը հոսելու նշաններ են երևում, շատ անգամ և հարինքի—տիֆի նման էլ խլութիւն։ Առողջանալը 4—10 օր է տևում։ Հաստատ դեղ սրա դէմ գտնուած չէ դեռ։ Շտապիր բժիշկ հասցնել։

## ԿԱՆԱՆՑ ՑՂՈՒԹԵԱՆ ԵՒ ԾՆՆԴԵԱՆ ՕՐԱՑՈՅՑԸ

| Վերջին դաշտանը նեմէ եղել է | Ծնունդը լինելու է | Վերջին դաշտանը նեմէ եղել է | Ծնունդը լինելու է | Վերջին դաշտանը նեմէ եղել է | Ծնունդը լինելու է |
|---|---|---|---|---|---|
| Յունվար . . . . 1 | Հոկտեմբեր . . 8 | Մայիս . . . . . 5 | Փետրվար . . . 9 | Սեպտեմբեր . . 5 | Յունիս . . . . 12 |
| » . . . . 5 | " . . 12 | " . . . . . 10 | " . . . 14 | " . . 10 | " . . . . 17 |
| » . . . . 10 | " . . 17 | " . . . . . 15 | " . . . 19 | " . . 15 | " . . . . 22 |
| » . . . . 15 | " . . 22 | " . . . . . 20 | " . . . 24 | " . . 20 | " . . . . 27 |
| » . . . . 20 | " . . 27 | " . . . . . 25 | Մարտ . . . . . 1 | " . . 25 | Յուլիս . . . . 2 |
| » . . . . 25 | Նոյեմբեր . . . 1 | " . . . . . 28 | " . . . . . 4 | " . . 28 | " . . . . 5 |
| » . . . . 28 | " . . . 4 | Յունիս . . . . . 1 | " . . . . . 8 | Հոկտեմբեր . . 1 | " . . . . 8 |
| Փետրվար . . . 1 | " . . . 8 | " . . . . . 5 | " . . . . . 12 | " . . 5 | " . . . . 12 |
| » . . . 5 | " . . . 12 | " . . . . . 10 | " . . . . . 17 | " . . 10 | " . . . . 17 |
| » . . . 10 | " . . . 17 | " . . . . . 15 | " . . . . . 22 | " . . 15 | " . . . . 22 |
| » . . . 15 | " . . . 22 | " . . . . . 20 | " . . . . . 27 | " . . 20 | " . . . . 27 |
| » . . . 20 | " . . . 27 | " . . . . . 25 | Ապրիլ . . . . . 1 | " . . 25 | Օգոստոս . . . . 1 |
| » . . . 25 | Դեկտեմբեր . . 2 | " . . . . . 28 | " . . . . . 4 | " . . 28 | " . . . . 4 |
| Մարտ . . . . . 1 | " . . 6 | Յուլիս . . . . . 1 | " . . . . . 7 | Նոյեմբեր . . . 1 | " . . . . 8 |
| » . . . . . 5 | " . . 10 | " . . . . . 5 | " . . . . . 11 | " . . . 5 | " . . . . 12 |
| » . . . . . 10 | " . . 15 | " . . . . . 10 | " . . . . . 16 | " . . . 10 | " . . . . 17 |
| » . . . . . 15 | " . . 20 | " . . . . . 15 | " . . . . . 21 | " . . . 15 | " . . . . 22 |
| » . . . . . 20 | " . . 25 | " . . . . . 20 | " . . . . . 26 | " . . . 20 | " . . . . 27 |
| » . . . . . 25 | " . . 30 | " . . . . . 25 | Մայիս . . . . . 1 | " . . . 25 | Սեպտեմբեր . . 1 |
| » . . . . . 28 | Յունվար . . . . 2 | " . . . . . 28 | " . . . . . 4 | " . . . 28 | " . . 4 |
| Ապրիլ . . . . . 1 | " . . . . 6 | Օգոստոս . . . . 1 | " . . . . . 8 | Դեկտեմբեր . . 1 | " . . 7 |
| » . . . . . 5 | " . . . . 10 | " . . . . 5 | " . . . . . 12 | " . . 5 | " . . 11 |
| » . . . . . 10 | " . . . . 15 | " . . . . 10 | " . . . . . 17 | " . . 10 | " . . 16 |
| » . . . . . 15 | " . . . . 20 | " . . . . 15 | " . . . . . 22 | " . . 15 | " . . 21 |
| » . . . . . 20 | " . . . . 25 | " . . . . 20 | " . . . . . 27 | " . . 20 | " . . 26 |
| » . . . . . 25 | " . . . . 30 | " . . . . 25 | Յունիս . . . . . 1 | " . . 25 | Հոկտեմբեր . . 1 |
| » . . . . . 28 | Փետրվար . . . 2 | " . . . . 30 | " . . . . . 4 | " . . 28 | " . . 4 |
| Մայիս . . . . . 1 | " . . . 5 | Սեպտեմբեր . 1 | " . . . . . 8 | | |

# X. ԲՆԱԳԻՏԱԿԱՆ

### ԾԱՌԵՐՈՒ ԽՄԱԾ ՋՈՒՐԸ

Ծառերը, շատ մեծ քանակութիւնով ջուր են խմում, ըստ գերմանացի բնապատում Հօհնէլի սպառում են այնքան ջուր, որքան իրանց տրամագրութեան տակ գրուի:

Գ.-Դը—Բէլիս հաստատած է, որ ծառերը չոր տարիներէ աւելի անձրեւոտ և խոնաւ տարիներուն աւելի մեծ քանակութեամբ ջուր են ծծում:

Եղևնիի (շամ աղաճը) 100 կրամ տերևը 10 կրամ ջուր կսպառէ, հացի (fren-ւէշ պտտաքի)-ի 100 կրամ տերևը 85 կրամ ջուր:

Այս հաստատութիւններէն կհանուի հետաքրքիր հետևողութիւն մը թէ անտառները բնութեան մէջ այն կարևոր դերը կկատարեն ինչ որ կանոնաւորիչները մեքենաներու վրայ:

Մէկ հէքտար, այսինքն 10,000 մեթր քառակուսի տարածութիւն ունեցող հողերու վրայ տնկած 100 տարեկան անտառ մը, օրական 25—30,000 քիլօ ջուր կծծէ, որ ըսել է օրական երեք կամ ամսական տասը տասնորդամեթր բարձրութեամբ անձրև: «Դութեան»



# XI. ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ

### ՀԱՒՆՈՑԻ ՄԱԿԱԲՈՒԾՆԵՐՈՒ ՋՆՋՈՒՄԸ.

Մակարուծները այսինքն շատ պզտիկ և գրեթէ անտեսանելի որդերը հաւնոցներու մէջ կոտորածներ կը գործեն։ Այս թշնամին այնքան փոքրիկ և այնքան բազմաթիւ է, որ անոր դէմ կռուելը դժուար է, մինչդեռ ինքը նըշմարելի վնասներ կը գործէ։

Երբ հաւնոց մը վարակուի այս մակարուծներով հաւերուն վրայ հարիւրաւոր որդեր կը գտնուին, որոնք ծծելով խեղճ կենդանիներու արիւնը բոլորովին կը նիհարացնեն զանոնք։

Կակաչնին և երեսնին կը տժգունին, կենդանին հալմաշ կըլլայ և շատ չանցած կը մեռնի եթէ ժամանակին այս թշնամիի առաջքը չառնուի։

Թխսող հաւերը բնաւ չեն կրնար դիմադրել մակարուծներուն, որովհետև իրենց անմաքրութիւնը պատճառ կըլլայ որ թշնամին իր վրայ բեղուն հող գտնելով բազմապատկի։

Թուխս դրուած հաւ մը թխսերու դրուած պահուն եթէ քանի մը օջիլ միայն ունենայ իր վրայ, անոնցմէ միլիոնաւորներ կը ծնին շատ չանցած։

Ինչպէս առջի նոյնպէս այս պարագային արմատովին և անմիջական կերպով ջնջելու համար չարիքը, պէտք է ընել ծծմբային թթուի (Acide Sulfureux) բաղնիք։

Առաջինը կը կայանայ հաւերը թաթխել պոչէն սկսելով մինչև փետուրներու վերջացած տեղը, ծծմբատր պոտասի (Sulfure de Potassium) բաղնիքի մը մէջ, այսպէս կենդանին մինչև գլխուն ներքևի մասը կը թաթխուի բաղնիքին մէջ, ձեռքով ալ օգնելով որպէս զի դեղը թափանցէ մինչև մարմինը։ Այս գործողութենէն ետքը կը չորցուի քուրջով մը հաւը և թող կը տրուի արևը։

Այս միջոցը շատ արագ է և կը յանձնարարուի գեղեցիկ եղանակին, որովհետև իւրաքանչիւր հաւը 2-3 վայրկեանէն կազատի թշնամիէն։

Ձմեռ եղանակին և թխսող հաւերու վրայ եթէ պէտք ըլլայ կատարել գործողութիւնը նախամեծար պէտք է համարել ծծմբի ծխով կամ—(Ասիտ Սիւլֆիւրէս)-ով դարմանումը։

Հաւը կը դրուի տուփի մը մէջ, գլուխը դուրս թողլով ծակէ մը և անոր ներքևը կայրուի ծծումբը։

7—8 վայրկեանէն ամենէն ոջլոտ կենդանիին գլուխը դուրսը գտնուելով, բնական է չի խեղդուիր։

Acide Sulfureux-ն փետուրներուն տակը մտնելով մահ կը հասնի և վայրկենաբար կոչնչացնէ մակաբուծները, միևնոյն ժամանակ կը բժշկէ մորթի հիւանդութիւնները մանաւանդ թաթիկներու մէկ հիւանդութիւնը, որուն կըսեն հաւերու քոս։

«Գութան»

# XII. ՏԱՆՏԻԿԻՆ

### ԽՆՁՈՐՆԵՐԸ ՊԱՀԵԼ.

Ձմեռն և ամառն ևս մինչև մէկ տարի պահելու համար խնձորը պէտք է ընտրել ամենէն լաւը և չվիրաւորուած պտուղները, դնել սենեակի մէջ ուռիով հիւսուած տափակ կողովներու վրայ այնպէս որ իրար չը դիպչեն։

Անմիջապէս փակել դռներն, պատուհանները, օրթատունկի ոստերով կրակ վառել մինչև որ սենեակը ամբողջովին լեցուի ծխով. չորս հինգ օր շարունակ կրկնել կրակ վառելը։

Վեցերրորդ օրը մէկ մէկ վեր առնել պտուղները և դնել սնտուկի մէջ ցորենի մրեղով (փոքր յարդ) ուշադրութիւն ընելով, որ խնձորները իրար չը դիպչեն, կարգ կարգի վրայ շարելով և միջոցները մրեղով բաժնելով լեցնելու է սնտուկը ամբողջովին պտուղով և այնպէս փակելու է կափարիչը։



# XIII. ԿԵՆԴԱՆԱԲԱՆԱԿԱՆ

ԱՊՐՈՂ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ։

Կը հաշուեն, որ երկրագնդի վրայ 400,000 տեսակ կենդանիներ կապրին. միայն միջատները 280,000 տեսակ են, որոնց 120,000-ը պատենաթեւաւորներ (coliopteres) են, 38,000-ն ալ թաղանթաթեւաւորներ։

Ձկներու տեսակներուն թիւը կը հասնի 12,000-ի, սողուններինը 8,000-ի, որոնց 1,600-ը օձեր են և 300-ը թունաւոր։

Թռչուններու թիւը 13,000-ի մօտ է։ Մինչև այսօր գտնուած են 1300 տեսակ երկակենցաղներ, 20,000 տեսակ սարդոստէնի, 50,000 տեսակ թուլամորթներ, 300 տեսակ սալրամորթեր, 3,000 տեսակ որդեր։

Բէրլինի Բնապատմական միւզէն, որու հաւաքածուն շատ կարևոր է, ունի 200,000 տեսակ երկակենցաղների և 1.800,000 կենդանիի օրինակներ։



# XIV. ՀԵՏԱՔՐՔԻՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Մի գիտնականի հաշուով ամբողջ երկրագնդի վերայ ներկայումս կայ 9 միլիոն էշ և ջորի, 32 միլիոն այծ, 67 միլիոն ձի, 104 միլիոն խոզ, 312 միլիոն կով և եզ, 511 միլիոն ոչխար, ընդհանուր բոլորը 1,035 միլիոն գլուխ։

—

Գոլինեզիայում գտել են մի թռչունի կմախք, որի բարձրութիւնը ոտքից մինչև գլուխ 20 ֆուտ է։

—

Ամերիկացիները ունեն մի թնդանօթ, որ 7200 փութ է կշռում, երկարութիւնը 7 սաժէն է, ամեն մի գնդակի ծանրութիւնը 60 փութ է, որը 25 վերստ տեղ է թռչում։

—

Ֆիլիպպեան կղզիներում գտել են մի տեսակ ծաղիկ, որի պսակը հինգ թերթերից է բաղկացած և շրջապատն առնուազը հինգ սաժէն, ամենամանր ծաղիկը գլխի չափ է և կոչւում է Բօլօ։

—

Ամուրիների տուրք։ — Պենսիլվանիայում մի նոր օրէնք է հրատարակուած, որով 40-ն անցած տղամարդիկ եթէ ամուսնանալ ուզեն, պէտք է 100 դոլար (200 ր.) տուրք վճարեն։ Այդ տուրքից կազմուած գումարը կը յատկացուի 40-ն անց կանանց, որոնք ամուսնանալու քաղցրութիւն չեն զգացել։ Ամուրին, եթէ իր նահանգի սահմանից դուրս գալու և ամուսնանալու լինի, դարձեալ պարտական է նոյն տուրքը վճարելու։



# XV. ԶՈՒԱՐՃԱԼԻՔ

Ինչպէ՞ս էք մտադիր անելու, պարտքը միանգամից պիտի տաք, թէ մաս առ մաս։

—Ես լաւ եմ համարում միանգամից վճարել։

—

Դատաւորը.—Ակա՛յ, կարելի չէ պաշտպան փաստաբանին աչքով անքով անել։

Վկայ կինը.—Մեղադրեալի օգտին եմ անում այդ. հօ չէ՞ք ուզում, որ ձեզ էլ անեմ։

—

Պարոն ուսանող, կարելի չէ՞ ինձ մի գործ տաք։

—Ի՞նչ գործ։

—Օրինակ ձեր տեղակ շարադրութիւն գրել կամ քննութիւն տալ։

—

Պսակից առաջ հայրը հարցրեց աղջրկան։

—Ինչո՞ւ չես լաց լինում, ինչպէս սովորութիւնն է։

—Նա՛ պէտք է լաց լինի, որին ես կին պէտք է լինիմ, պատասխանեց աղջիկը։

—

Կրօնի դասին քահանան հարցրեց աշակերտին։

—Ո՞րտեղ է քո հայրը։

—Մարաքումը, պատասխանեց աշակերտը։

—

Դատաւոր.—Մեղադրեալ, խոստովանո՞ւմ ես, որ յանցաւոր ես։

Մեղադրեալ.—Երբէ՞ք։

—Ի՞նչպէս, ահա չորս վկաներ կան, որոնք տեսել են քեզ յանցանքը գործելիս։

—Ի՞նչ անենք, որ դրանք տեսել են, հարիւրաւոր մարդիկ էլ կան, որ չեն տեսել։

—

Հէնց նոր՝ տիկին Սաթինիկի մօտ էի. գնացել էի նոր տարին շնորհաւորելու։

Զկարծեմ թէ մի մեծ հաճոյք պատճառած լինիս. նրա հին տարիներիթիւն առանց այն էլ բաւական շատ է. նորն էլ պէ՞տք է աւելացնել։



# XV. ՎԱՃԱՌԱԿԱՆԱԿԱՆ

Հասարակ պարտամուրհակի օրինակ

Թիֆլիս, 1-ն Յունիսի 1904 Թ.

Մուրհակ 1000 րուբլի արժաթիս

Յուլիսի մէկին, հազար ինն հարիւր չորս ամի, պարտաւոր եմ վճարել Թիֆլիսի 2-րդ-կարգի վաճառական Յովհաննէս Մաթէոսեան Կիրակոսեանին հազար ռուբլի արժաթ, որը ես նրանից լիովին ստացել եմ։

Ստորագրութիւն—Թիֆլիսի քաղաքացի Անտօն Պօղոսեան_Նիկողոսեան։

—

## ՌՈՒՍԱԿԱՆ ՉԱՓԵՐ

### Տարածութիւն.

| | | | | |
|---|---|---|---|---|
| Կառակուսի մղոնը ունի | | 49 | քառ. | վերստ |
| » | վերստը » | 250,0(0 | « | սաժէն |
| » | սաժէնը » | 9 | » | արշին |
| » | արշինը » | 256 | » | վերշոկ |
| » | սաժէնը » | 49 | » | ֆուտ |
| » | ֆուտը » | 144 | » | դիւյիմ |
| Դեսեատինը ունի | | 2400 | » | սաժէն |

### Բովանդակութեան չափեր.

| | | | | |
|---|---|---|---|---|
| Խորանարդ մղոնն ունի | | 343 | խոր. | վերստ |
| « | վերստն » | 125 | միլ. խ. | սաժ. |
| » | սաժէնն » | 27 | խոր. | արշին |
| » | » » | 343 | » | ֆուտ |
| » | արշինն » | 4096 | » | վերշ. |
| » | ֆուտը » | 1728 | » | դիւյմ |
| » | արշինն » | 21,925 | » | » |
| » | սաժէնն » | 110,592 | խ. | վերշ. |

592,704 խոր. դիւյմ. 1 միլիօն խոր. հարիւրերորդ սաժէնին (1 сот.)։

### Ընդեղէնների չափեր.

| | | |
|---|---|---|
| Լաստը ունի | . . | 12 չետվերտ |
| Չետվերտը | . . | 8 չետվերիկ |
| Չետվերիկը | . . | 8 գարնցի |

### Հեղուկների չափեր.

| | | |
|---|---|---|
| Տակառն ունի | . . | 40 վեդրօ |
| Վեդրօն » | . . | 10 շտօֆ |
| » հաւասար է | . | 30 գրվ. ջրի |

Շտօֆը կամ կրուժկէն ունի 2 շիշ (բութիլ

### Դեղատան քաշեր.

| | | |
|---|---|---|
| Դրուանքան ունի (84 մս.) | . | 12 ունց |
| Ունցիան » | . . . | 8 դրախմ |
| Դրախման » | . . . | 3 սկրուպուլ |
| Սկրուպուլը » | . . . | 20 գրան |
| 1 գրանը » | . . . | 1 ցորենաքաշ։ |

—

## ՔԱՇԵՐԸ

### Զանազան երկրների փողերը

Անգլիայի 1 վաճ. գրվ. 16 ունց. հաւասար է ռուսաց 1 գրվ. 10 մսխ.

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ֆրանսիացւոց 1 գրվ. | — | » | 1/2 | » |
| կիլօգրամը. . | 1 | » | 41 | » |
| Պրուսիայի 1 ֆունտը | 1 | » | 13 | » |
| 1 ցէնտնէր. . | — | » | 1/2 | » |
| Չինաստանի 1 գրվ. | 2 | » | 40 | » |
| Եապոնիայի 1 մուէ | 57 | » | 1 | » |
| 1 կատտին . | 1 | » | 42 | » |

—

### ԴՐՈՒԱԳԱՒՈՐ ԹՂԹԵՐԻ ՀԱՐԿԸ

*Տարբերակներ*

| Արժողութ. գումարը. | | | Թերթի գինը |
|---|---|---|---|
| | | 50 ր. | 1 |
| 50-ից | մինչև | 100 » | 10 |
| 100 | » | 200 » | 85 |
| 200 | » | 300 » | 0 4 |
| 300 | » | 400 » | 50 |
| 400 | » | 500 » | 70 |
| 500 | » | 600 » | 80 |
| 600 | » | 700 » | 90 |
| 700 | » | 800 » | 1— |
| 800 | » | 900 » | 1,15 |
| 900 | » | 1000 » | 1,20 |
| 1000 | » | 1500 » | 1,40 |
| 1500 | » | 2000 » | 2,50 |

| Արժողութ. գումարը. | | | Թերթ գին |
|---|---|---|---|
| 2000-ից | մինչև | 3200 ր. | 3,7 |
| 3200 | » | 4000 » | 5,15 |
| 4000 | » | 6400 » | 6,80 |
| 6400 | » | 8000 » | 9— |
| 8000 | » | 10000 » | 11,40 |
| 10000 | » | 12000 » | 13,80 |
| 12000 | » | 15000 » | 15,60 |
| 15000 | » | 20000 » | 21— |
| 20000 | » | 25000 » | 27,66 |
| 25000 | » | 30000 » | 33,60 |
| 30000 | » | 40000 » | 42— |
| 40000 | » | 50000 » | 64— |

—

## XVII. ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ

ԵՐԿՐԱԳՆ. ՄԱԿԵՐԵՒՈՅԹԸ 509,950,714 քառակ. կիլոմետր է (մի կիլոմետրը 469 սաժէն է)։

ՑԱՄԱՔԸ երկրագնդիս մօտ 1/3 մասն է կազմում—2,458,804 հող 6,802,634 ջուր։

ՈՎԿԻԱՆՈՍՆԵՐԻ ՄԻՋԻՆ ԽՈՐՈՒԹԻՒՆԸ.—Ատլանդեանը 3,790, Հնդկականը 3,444. Մեծ-խաղաղականը 4003, Հարաւային կիսագնդինը 3,390 մետր։

ՆՇԱՆԱՒՈՐ ԼԵՌՆԵՐԻ ԲԱՐՁՐՈՒԹԻՒՆԸ.—Էվերէստ 29,000 ոտնաչափ, Դաւալագիրի 25,171, Էլբորուս 18,000, Արարատը 17,000, Կազբէկը 16,000, Արագածը 13,500։

ՆՇԱՆԱՒՈՐ ԳԵՏԵՐԻ ԵՐԿԱՐՈՒԹԻՒՆԸ

Միսիսիպին 5,890 կիլոմետր, Նեղոսը 5,640, Ամազոնը 5565, Եանդ-Ցէ-Կեանգը 5,410, Օբը 4,230, Ամուրը 4.155, Վոլգան 3,500, Դանուբը 3,042, Դոնը 1,807, Ուրալը 1,520, Րէյնը 1,370, Սենան 600, Թեմզան 325 կիլոմետր։

ԵՐԿՐԱԳՆԴԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԸ

Երկրագնդիս վրայ բնակւում են մօտ 1564 միլիօն բնակիչ, որոնցից Եւրոպայում 376 միլ., Ասիայում 860 միլ. Աֆրիկայում 206 միլ., Ամերիկայում 125 միլ. և Աւստրալիայում 5 միլիօն։

Երկրագնդիս ազգերը խօսում են 3600 լեզուից աւելի։

Բոլոր կրօնները երկրագնդիս վրայ 1000-ից աւելի են։

ԵՒՐՈՊԱՅԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԸ ՑԵՂՈՎ.

ՍԼԱՒՈՆԱՆԵՐՆ են 94,355,000—(որոնցից 65 միլ. ռուսներ և բուլղարներ, 11 միլ. լեհեր, 7 միլ. չեխեր, մօրաւներ, 10 միլ. (սերբխացիք, բուլղարներ և կրոատներ)։

ՌՈՄԱՆԱԿԱՆ ԿԱՄ ԼԱՏԻՆԱԿԱՆ ԱԶԳԵՐԸ — 98,94,8000 հոգի։ (Սրանցից ֆրանսիացիք 40 միլ., իտալացիք 30 միլ., սպանացիք և պորտուգալացիք 23 միլ., ռումանացիք 9 միլ.։ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԱԶԳԵՐ—115,130,000. (որանցից գերմանացիք և հոլանդացիք 63 միլ. անգլիացիք 40 միլ. սկանդինաւեցիք 9 միլ.)։

ՔՐԻՍՏՈՆԵԱՆԵՐԸ — Կրօնով ամբողջ երկրագնդի վրայ։

| | | | |
|---|---|---|---|
| Կաթոլիկներ . . . . . . | 245 | միլ. | 493 |
| Բողոքականներ. . . . . | 140 | » | |
| Ուղղափառներ . . . . . | 91 | » | |
| Այլ և այլ քրիստ. . . . | 11 | » | |

ՀԱՅԵՐԸ 5 միլիօն են։

| | | | |
|---|---|---|---|
| ՄԱՀՄԵԴԱԿԱՆՆԵՐ. . . | — | » | 176 |
| ՀՐԷԱՆԵՐ . . . . . . . . | — | » | 9 |
| ԿՌԱՊԱՇՏՆԵՐ | | | |
| Բուդդայականներ. . . . | 500 | » | 897 |
| Բրամինականներ . . . . | 146 | » | |
| Ֆետիշներ . . . . . . . . | 245 | » | |
| Ընդամենը. . . . . . . . . . | | | 1576 |

ԳԼԽԱՒՈՐ ՔԱՂԱՔՆԵՐԸ համարւում են, Լոնդոնը՝ 5,190,000 բնակիչ, Պեկինը 4,500,000, Պարիզը 2,228,806, Վիեննան՝ 1,136,270, Բերլինը՝ 1,125,000 Կ. Պոլիսը 850,000, Նէապոլը՝ 450,000, Պետերբուրգը՝ 1,267,000, Մոսկուան՝ 986,000.

—

ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԵԱՆՔԻ ՄԻՋԻՆ ԹԻՒԸ

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Մինչև | 60 տ. հասն. | են | 100-ից | 6 | մարդ |
| » | 80 » | » | 500 | 1 | » |
| » | 100 » | » | 1000 | 1 | » |

Մեռնում են տարէնը 33 միլ., այսինքն ամեն օր 96 հազար մարդ, ամեն մի ժամում 3730 միլ., ամեն մի րոպէում 60. մի վայրկեանում մի հոգի։

Ծնւում են տարին 42 միլ., այսինքն 9,500,000 աւելի, քան մեռնում են։

Պսակւում են 82 միլ., և 120 ար զուն մի պսակ է գալիս։

# XVIII. ՔԱՂԱՔԱԿԱՆ

## ԵՐԿՐԱԳՆԴԻՍ ՆՇԱՆԱՒՈՐ ՏԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՆ ԵՒ ԱԶԳԵՐՆ ԻՐԵՆՑ ԵՐԿՐՆԵՐՈՎ.

| | Անունները | Տիրապետող կրօնը | Պետութեան գլուխը | Տարածութիւնը ք. քլ. | Բնակչաց թիւը | Մայրաքաղաքները |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Արաբստան | Մահմեդական | Նահապետական | 2,300,000 | 3,000,000 | Սիվան |
| 2 | Արգենտին. Հան. | Քրիստոնեայ. | Նախ. Լուիս Պենա | 2,835,969 | 4,000,000 | Բուր-Այրէս |
| 3 | Անամ | Անգլ. եկեղ. | Մեսրիէ Տամ-Տայ | 230,000 | 21,000,000 | Գուէյի |
| 4 | Անգլիա | » „ | Էդուարդ կայս. | 314.628 | 40,000,000 | Լոնդոն |
| | » գաղթակ. | » „ | „ „ | 24,964,096 | 40,000,000 | „ „ |
| 5 | Աւստրո-Հունգ. | Կաթոլիկ | Ֆրանց-Յովսէփ | 676,667 | 20,000,000 | Վիեննա |
| 6 | Աւղանստան | Մահմեդական | | 550,660 | 4,000,00 | Քաբուլ |
| 7 | Բելուճստան | Մահմեդական | Միր-Խօդադադ | 315,015 | 350,000 | Գելատ |
| 8 | Բելգիա | Կաթոլիկ | Լէօպոլդ II. Թագ. | 29,457 | 6,000,000 | Բրիւսէլ |
| 9 | Բուլղարիա | Օրթոդոքս | Ֆերդինանդ իշխ. | 99,873 | 5,001,090 | Սոֆիա |
| 10 | Բրազիլիա | Կաթոլիկ | Նախ. Ֆ. Պէնյս. | 8,337,213 | 15,000,000 | Րիօ-Ժանեյրօ |
| 11 | Բուխարա | Մահմեդական | Սէիդ-Աբդուլ Խ. | 239,000 | 1½ մլ. | Բուխարա |
| 12 | Գերմանիա | Աւետարանա. | Վիլհելմ II. | 540,418 | 60 „ | Բերլին |
| 13 | Հաբեշստան | Հայադաւան | Մենելիք II. | 508,280 | 5 „ | Գոնդար |
| 14 | Հոլանդիա և գաղ. | Բողոքական | Վիլհելմինա. | 2,036,291 | 4½ „ | Հաագա |
| 15 | Յունաստան | Օրթոդոքս | Գէորգ I. | 68,688 | 2 „ | Աթենք |
| 16 | Դանիա | Լիւտերական | Քրիստիան. IX. | 232,302 | 2½ „ | Կոպենհագեն |
| 17 | Եգիպտոս | Մահմեդական | Աբբաս-փաշա II. | 2,959,000 | 19,833,000 | Կայիրէ |
| 18 | Իսպանիա և գաղ. | Կաթոլիկ | Ալֆոնս III խնամ. | 1.233,817 | 20 մլ. | Մադրիդ |
| 19 | Իտալիա | Կաթոլիկ | Վիկտոր-Էմմ. II. | 286,588 | 30½ „ | Հռոմ |
| 20 | Չինաստան | Կռապաշտ | Կվանգ-Սու | 11,574,356 | 403 „ | Պեկին |
| 21 | Կոլումբիա | Կաթոլիկ | Ռաֆ-Նունէզ | 1,118,100 | 4 „ | Բոգոտա |
| 22 | Կոնգօ | » | Բելգ. (Թագ.) | 2,735,158 | 17 „ | Բոմա |
| 23 | Ռուսաստան | Օրթոդոքս | Նիկոլայ II կայսր | 20,666,445 | 125 „ | Ս. Պետերբուրգ |
| 24 | Կորէյա | Կաթոլիկ | Թուէջի | 218,192 | 10½ „ | Սէուլ-(Կեօնգ) |
| 25 | Մեքսիկա | Կաթոլիկ | Նախագ. Դիազ | 1,946,292 | 11 „ | Մեքսիկա |
| 26 | Մարոկկօ | Մահմեդական | Մուլէյ-Հասան | 816,000 | 8 „ | Ֆէզ |
| 27 | Պարսկաստան | Մահմեդական | Մուզ.-էդին-Շահ | 1,648,125 | 9 „ | Թեհրան |
| 28 | Պերու | Կաթոլիկ | Նախ. Բերմուդէս | 1,049,970 | 3 „ | Լիմա |
| 29 | Պորտուգալիա | Կաթոլիկ | Դոն-Կարլոս Թագ | 89,143 | 5 „ | Լիսաբոն |
| 30 | Ռումինիա | Օրթոդոքս | Կարլոս | 129,947 | 6 „ | Բուքրէշ |
| 31 | Սերբիա | Օրթոդոքս | Ալէքսանդր I. | 48,586 | 2 „ | Բելգրադ |
| 32 | Սիամ | Բուդդայական | Չուլալոնգկորն | 726,550 | 9 „ | Բանգոկ |
| 33 | Միացեալ-Նահ. | Քրիստոնեայ | Ռուզվելտ | 9,668,272 | 77 „ | Վաշինգտոն |
| 34 | Տաճկաստան | Մահմեդական | Աբդուլ-Համիդ II. | 2,061,224 | 21 „ | Կ. Պոլիս |
| 35 | Ֆրանսիա և գաղ. | Կաթոլիկ | Նախագահ Լուբէ | 3,996,038 | 76 „ | Պարիզ |
| 36 | Չերնոգորիա | Օրթոդոքս | Իշ. Նիկոլայ | 9030 | ¼ „ | Ցեթինէ |
| 37 | Չիլի | Կաթոլիկ | Նախ. Դոն-Մոնտ | 753,216 | 3 „ | Սան-Թագօ |
| 38 | Շվէյցարիա | Բողոքական | Նախ. Կարլ-Շենկ | 41,346 | 3 „ | Բերն |
| 39 | Շվէցիա-Նորվեգ. | Լիւտերական | Օսկար II. | 775,996 | 7 „ | Ստոկհոլմ |
| 40 | Էկվատոր | Կաթոլիկ | Նախ. Կորտէրօ. | 650,937 | 1½ „ | Կվիտօ |
| 41 | Ճապոնիա | Սինտոյի օրէն | Մուցու-Խիտօ կայ. | 382,447 | 49 „ | Տոկիօ |

# XIX. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ

## 1) ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԵՒ ԿՈՎԿԱՍԻ ՄԻ ՔԱՆԻ ՔԱՂԱՔՆԵՐԻ ՀԵՌԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ

### ԹԻՖԼԻՍԻՑ

| | Վերստ |
|---|---|
| Աբասթուման | 210 |
| Ագուլիս | 422 |
| Ալէքսանդրօպօլ | 243 |
| Արդահան | 387 |
| Աստարա | 1308 |
| Ախալցխա | 186 |
| Արխանգելսկ | 3248 |
| Ախալքալաք | 248 |
| Բաքու | 517 |
| Բլագովեշչենսկ | 8766 |
| Բուխարա | 1853 |
| Գանձակ | 182 |
| Եկատերինոդար (Կուբ.) | 809 |
| Բաթում | 330 |
| Բորժոմ | 140 |
| Գորի | 71 |
| Գրոզնա | 190 |
| Դերբենդ | 599 |
| Եյսկ | 851 |
| Եկատերինոսլաւ | 1417 |
| Երեւան | 264 |
| Եակուտսկ | 9264 |
| Զաքաթալա | 192 |
| Էջմիածին | 282 |
| Թելաւ | 93 |
| Լանքարան | 569 |
| Կաղզուան | 415 |
| Հին-Նախիջեւան | 422 |
| Հաշտարխան | 2735 |
| Ղզլար | 441 |
| Ղուբա | 674 |
| Մասխա | 334 |
| Մոզդոկ | 288 |
| Նոր-Բայազէդ | 231 |
| Նուխի | 160 |
| Շամախի | 398 |
| Թեմրր-Խան-Շուրա | 456 |
| Ժիտոմիր | 1988 |
| Իրկուտսկ | 6520 |
| Լիւբլին | 2414 |
| Խարկով | 1393 |
| Խերսոն | 1508 |
| Կալիշ | 2863 |
| Կամենէց-Պոդոլսկ | 2179 |
| Կիեւ | 1859 |
| Կաստրոմա | 2372 |
| Կովնո | 2437 |
| Կուրսկ | 1522 |
| Հէլսինգ-Ֆորս | 3041 |
| Ղազան | 234 |
| Մոսկուա | 20160 |
| Նիժնի-Նովգորոդ | 2262 |
| Նիկոլայեւսկ | 10,510 |
| Նովգորոդ | 2529 |
| Նովո-Չերքասկ | 902 |
| Նոր-Նախիջեւան | 941 |
| Ուրալսկ | 2490 |
| Ուֆա | 2622 |
| Չերնիգով | 1830 |
| Պենզա | 1945 |
| Պետերբուրգ | 2623 |
| Պերմ | 2917 |
| Պոլտաւա | 1494 |
| Պսկով | 2578 |
| Ռեվէլ | 2223 |
| Շուշի | 345 |
| Պետրովսկ | 499 |
| Պեատիգորսկ | 407 |
| Ջուղա | 461 |
| Սալեան | 443 |
| Սեան | 200 |
| Սղնախ | 100 |
| Տաթեւ | 433 |
| Փոթի | 286 |
| Ռեազան | 1834 |
| Ռիգա | 2701 |
| Ռոստով (Դոնի վրայ) | 939 |
| Սամարա | 2128 |
| Սարատով | 1716 |
| Սիմբիրսկ | 2134 |
| Կարս | 346 |
| Սիմֆերոպօլ | 1222 |
| Սամարղանդ | 2207 |
| Ստաւրոպօլ | 550 |
| Վարշաւա | 2584 |
| Վիլնո | 2536 |
| Վլադիկաւկազ | 201 |
| Վլադիմիր | 2200 |
| Վլադիվոստոկ | 10,644 |
| Վորոնէժ | 1462 |
| Տաշկէնտ | 2490 |
| Տուլա | 1910 |
| Քիշինեւ | 1878 |
| Քութայիս | 202 |
| Օմսկ | 4065 |
| Օրենբուրգ | 2524 |
| Օրեօլ | 1762 |

## 2) ԿՈՎԿԱՍԻ ՔԱՂԱՔՆԵՐԻ ԲԱՐՁՐՈՒԹԵԱՆ ՉԱՓԸ ԵՒ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԹԻՒԸ

| Քաղաքները | (ոտնաչ). Բարձր. ծ. մակեր. | Բնակիչ. թիւը |
|---|---|---|
| Թիֆլիս | 1400 | 168,024 |
| Բաքու | — | 95,679 |
| Եկատերինոդար | — | 67,610 |
| Ստաւրոպօլ | 2000 | 40,017 |
| Վլադիկաւկազ | 2346 | 46,981 |
| Շամախի | 2230 | 28,545 |
| Մայկոպ | — | 27,945 |
| Եյսկ | — | 36,915 |
| Շուշի | 5076 | 32,806 |
| Նուխի | 2454 | 27,757 |
| Ալէքսանդրօպօլ | 5079 | 23,670 |
| Գանձակ | 1446 | 25,294 |
| Քութայիս | — | 24,227 |
| Երեւան | 3229 | 24,555 |
| Դերբենդ | — | 15,185 |
| Ղուբա | 1988 | 14,730 |
| Թեմրիւկ | 244 | 13,656 |
| Ախալցխա | 3376 | 23,265 |
| Մոզդոկ | 465 | 13,989 |
| Բաթում | — | 23,878 |
| Սղնախ | 2593 | 10.069 |
| Կարս | 6173 | 3,137 |
| Ղզլար | — | 8,778 |
| Նովոռոսիյսկ | — | 20,304 |
| Գէորգիեւսկ | 1032 | 11,290 |
| Թելաւ | 2420 | 11,014 |
| Անապա | — | 11,604 |
| Նոր-Բայազէդ | — | 7,120 |
| Հին-Նախիջեւան | 2949 | 7,911 |
| Գրոզնա | 419 | 6,214 |
| Գորի | 2006 | 7,383 |
| Փոթի | — | 5,785 |
| Արմաւիր | — | 6,634 |
| Ախալքալաք | 5545 | 5,303 |
| Պետրովսկա | — | 4,000 |
| Թեմրր-Խան-Շուրա | — | 3,356 |
| Կաղզուան | 4968 | 3,298 |
| Թաման | 444 | 3,231 |
| Դուշէթ | — | 2,041 |
| Սուխում | — | 3,279 |
| Արդահան | 6058 | 8,844 |
| Նոր-Նախիջեւան | — | 20,100 |

## 3) ԿՈՎԿԱՍԻ ՄԻ ՔԱՆԻ ՏԵՂԵՐԻ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԵՐԸ

| Տեղերի անունները | Հիւս. լայն. | Արե. երկայն. |
|---|---|---|
| Ալէքսանդրապօլ | 40°47 | 61°29 |
| Ախալցխա | 41 38 | 60 38 |
| Ախալքալաք | 41 25 | 60 08 |
| Բաքու | 40 22 | 67 29 |
| Բորժոմ | 41 50 | 61 02 |
| Գանձակ | 40 40 | 64 01 |
| Գէորգեւսկ | 44 08 | 61 08 |
| Գորի | 41 59 | 61 46 |
| Գռոզնա | 43 19 | 63 21 |
| Դիլիջան | 40 44 | 62 32 |
| Դերբենդ | 42 03 | 65 57 |
| Դուշէթ | 42 05 | 62 21 |
| Եկատերինոդար | 45 01 | 56 37 |
| Երեւան | 40 10 | 62 10 |
| Էջմիածին | 40 09 | 61 57 |
| Թելաւ | 41 55 | 63 08 |
| Թեմրր-Խան-Շուրա | 42 49 | 64 46 |
| Թիֆլիս | 41 43 | 62 27 |
| Լանքարան | 38 45 | 66 31 |
| Ղազբէկ | 42 39 | 62 18 |
| Կողբ | 40 03 | 62 10 |
| Ղզլար | 43 51 | 64 22 |
| Ղուբա | 41 21 | 66 10 |
| Մոզդոկ | 43 44 | 62 19 |
| Հին-Նախիջեւան | 39 12 | 63 04 |
| Նոր-Բայազէդ | 40 20 | 62 47 |
| Նովոռոսիյսկ | 44 42 | 55 26 |
| Նուխի | 41 12 | 64 51 |
| Շամախի | 40 37 | 66 18 |
| Շուշի | 49 49 | 65 24 |
| Պետրովսկա | 42 59 | 65 09 |
| Պեատիգորսկ | 44 02 | 60 45 |
| Սեւան | 40 33 | 62 50 |
| Սղնախ | 41 36 | 63 34 |
| Ստաւրոպօլ | 45 03 | 59 38 |
| Վլադիկաւկազ | 43 01 | 62 21 |
| Փոթի | 42 08 | 59 19 |
| Քութայիս | 49 16 | 60 22 |
| Օրդուբաթ | 38 54 | 63 41 |

## Ա Ղ Ի Ւ Ս Ա Կ

### 4) ՈՐԸ ՑՈՅՑ Է ՏԱԼԻՍ, ԸՍՏ ԹԻՖԼԻՍԻ ՄԻՋՕՐԷԱԿԱՆԻ, ԵՐԿՐԱԳՆԴԻ ՄԻ ՔԱՆԻ ՔԱՂԱՔՆԵՐԻ ԿԷՍ ՕՐՈՒԱՑ ԺԱՄԱՆԱԿԸ

| | ժ. | ր. | վ. | | | ժ. | ր. | վ. | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Ախալքալաք . . | 12 | 54 | — | ցեր. | Ս. Պետերբուրգ | 11 | 2 | — | ցեր. |
| Բագու . . . . | 12 | 20 | 8 | » | Սուխում . . . | 11 | 44 | 52 | » |
| Բաթում . . . | 11 | 47 | — | » | Թեմ. խան-շուրա | 12 | 9 | 12 | » |
| Վարշաւ . . . | 10 | 24 | 52 | » | Թիֆլիս . . . | 12 | — | — | » |
| Վլադիկաւկազ. | 11 | 59 | 28 | » | Խարկով . . . . | 11 | 25 | 44 | » |
| Գորի. . . . . | 11 | 57 | 12 | » | Երևան . . . . | 11 | 48 | 48 | » |
| Եկատերինոդար | 11 | 36 | — | » | **Արտասահման** | | | | |
| Հելսինգֆորս . | 10 | 40 | 36 | » | Պարիզ . . . . | 9 | 10 | 8 | առ. |
| Գանձակ . . . | 12 | 6 | — | » | Լոնդոն . . . . | 8 | 58 | 8 | » |
| Իրկուտսկ (Սիբ.) | 3 | 57 | 52 | եր. | Մադրիդ . . . | 8 | 43 | 28 | » |
